

THE ARMENIAN REPORTER

New York's Independent Armenian Newsweekly

— AMERICA'S LEADING ARMENIAN NEWSPAPER —

66A
287D
213E
213C
258G
160
293K

Editorial Offices:

42 60 MAIN STREET, FLUSHING, N.Y. 11355

Telephone: (212) 961-3600

Mailing Address:

P. O. BOX 488, FLUSHING, N.Y. 11355


May 1, 1978

Dear Sir:

Enclosed you will find several articles of interest which have been published in the Armenian Reporter along with one which was not published.

The article entitled "A Time for Change" was to have appeared in the April 25 edition of the Reporter along with the article endorsing Archbishop Manoogian, "Election of a Diocesan Primate--An Endorsement", by Mr. Nubar Dorian. However, due to the sensitive nature of the material and certain revelations, we refrained from printing this article in the paper, thinking it would better serve its purpose if it were mailed privately to delegates who are to attend the Diocesan Assembly.

Sincerely,



Edward K. Boghosian
Editor

EKB/ltl

Enclosures

THE ARMENIAN REPORTER ՏԵՂԵԳՐԱԿԱՆ

169
293K

ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ԱՐՀԱՄԱՐՀԱՆՔԸ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ԲՈՂՈՔԱԳԻՐ ՀԱՆՐԱԳԻՐՆԵՐՈՒՆ ՀԱՆԴԵՊ

Ապրիլ 9-ի Կիրակին, Մայամիի համայնքը կատարեց իր եկեղեցիի գնման 25ամեակը: Այդ առթիւ Թորգոմ Արքեպս- Մանուկեան Մայամի եկաւ, պատարագեց, քարոզեց, նա- խագահեց տարեդարձի ճաշկերոյթին եւ տեսնուեցաւ եկե- ղեցիի կազմակերպութիւններուն հետ:

Մայամիի հայ համայնքը միատարր հայութիւն մը չէ: Կազմուած է գլխաւորաբար տարեց զոյգերէ, այրիներէ եւ զանազան քաղաքներէ ու երկիրներէ եկած հայերով: Այս պատճառով ալ հակադիր մտայնութիւններ իրար կը բախին նշանակուած հովիւներու շուրջ, որոնք երկար կեանք չեն ունենար Մայամիի մէջ: Այսպէս՝ Մայամին ձեւով մը աքտորավայր դարձած է մէջտեղ մնացած կրօնաւորներու: Անոնց մէջ քախտաւոր եղած է Կիրեղ քահանայ Գալֆայեանը, հակառակ իր խեղճութեան եւ ուշագրաւ թերութիւններուն: Ան շատ լաւ կը վարձատրուի եւ ամէն դիւրութիւն կը վայելէ, որովհետեւ զգալիորէն շատցած է Մայամիի եւ շրջակայքի հայութիւնը ու հոս ձմրան օդափոխութեան եկողներու թիւը, որ եկեղեցիի եկամուտի գլխաւոր աղբիւրն է:

Իւրայատուկ հաճոյակատարութեամբ Գալֆայեան քահանան յաջողեցաւ սկիզբը շահիլ ժողովուրդի համակրութիւնը բայց վերջին երկու տարիներուն յայտնի եղաւ կեղծիքն ու խաղարկութիւնը, եւ ծայր տուաւ ժողովրդային զժգոհու- թիւնը, այն ալ գրաւոր բողոքագիրներով, նոյնիսկ հան- րագրութեամբ, որոնք սակայն շարունակ անտեսուեցան ստաջնորդին կողմէ: Ասկէ քաջալերուած հովիւի համակիր իմրակ մը, մէկ երկու ունեւոր բնասանիքներ, սկսան գործել քահանայի ուղածին պէս, ինչ որ անոր ուղածն ալ էր, քանի որ ամէն ինչ իր ուղածին պէս կ'ընթանար, նոյնիսկ կանոնադրութեան տրամադրութեան հակառակ:

Այսպէս, անցեալ տարի փորձառու տրատու անդամ մը, ՏԱՍ ՀԱԶԱՐ սուլարի մտիւմի մը համար հաշիւ պահանջե- լուն, փտարուեցաւ եկեղեցիէն: Ան բերանացի թէ գրաւոր զուր բողոքեց ստաջնորդին եւ զգուած հետացաւ եկեղեցիէն:

Այս տարի հովիւի կամակար գործունէութեան պատճա- ռաւ, տրատու անդամներու թիւն իջած է 145-էն 97-ի եւ տարեկան ծխական ժողովին ներկայ եղան մի միայն 25-26 անդամներ, այն ալ կիներ, որոնցմէ եղաւ ծխական խորհուրդի բնորոշութիւնները եւ անմիջապէս վաւերացուե- ցաւ ստաջնորդի կողմէ:

Ուշագրաւն այն է, որ չորս կին եւ երկու այրեր ընտրուեցան: Այրերէն մին խիստ բողոքագիրով մը հրա- ժարեցաւ եւ անոր տեղ եկաւ ուրիշ կին մը: Այնպէս որ այժմ Մայամիի եկեղեցիին ծխական խորհուրդը կազմուած է եօթ կիներէ եւ երկու այրերէ:

Եկեղեցիի տարեդարձի ճաշկերոյթին ուշագրաւ էր ժողո- վուրդի սակաւութիւնը, ինչ որ դարձեալ կը հաստատէ ժողովրդային զժգոհութիւնը:

Համայնքի կողմէ 65-70 ստորագրութեամբ բողոքագիր մը տրուեցաւ ստաջնորդին, որ փոխանակ լսելու զժգոհներու ձայնը, ըսած է,- «Ասոնք արժէք մը չունին, ասոնք անպիտան նամակներ են. փորերնիդ լեցուած է, պարպուե- ցաք. հանգստացաք»:

Առաջնորդի այս... վերաբերմունքէն ճարահատ բողոք- ներու հանրագրութիւնը դրկեցիք թեմական Խորհուրդի տեսնապէս՝ ձան նաճարեանին: Մտադիր ենք զայն դրկել նաեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսին:

Այս հանրագրութեան եւ բողոքագիր հրաժարականին մէջ կը թուենք քահանային հետեւեալ թերութիւնները.

1. - Կանոնադրութեան տրամադրութիւնները չգործադրելը.
2. - Միայն իր շահուն հետամուտ ըլլալը.
3. - Քահանային պատճառաւ ժողովուրդին եկեղեցիէն խրաչիլը եւ անդամակցութենէ զազրիլը.
4. - Քահանայի սպիտութիւնը, կանոնաւոր պատարագ չընելն ու քարոզ չխօսիլը.
5. - Ժողովներու արձանագրութեան հայերէն գրուելը՝ արդիւլը:
6. - Իրեն համակիր շեղոյներն մատնելու սպառնալիքով եկեղեցիէն հեռացելը.

Այս բան թերութիւններով հովիւի մը ստաջնորդէն պաշտ- արանսիլը անբարձրելի եւ անբնական չի՞ թուիր:

Ու չապրաւ է, որ ուրիշ թեմակալ եպիսկոպոս մը, քանի մը ամսուան մէջ, հայեցի սցիի մը ետուզեաւ տեղծած է, իսկ ստանդերկու տարիներու փորձառութեամբ ստաջնորդ մը, այսպէս ծուխերը զժգոհ փիճակի մատնած է:

Ի դիմաց սրտցաւ հանրագրողներու
ՕՉԱՆ ԱՊԱԳԼԵԱՆ,
Նախկին ծայրագոյն Վարդապետ եւ
Նախկին ծխական Խորհուրդի Ատենապետ